



ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ա) ՆՊԱՏԱԿ

Աշխարհաժողովի կողմից ապագա Ազգային Պետության անվտանգային հիմնադրույթների հռչակումը նպատակ ունի՝ հստակ փաստել հայ տեսակի համակեցության (պետության) վերաբերմունքը Նոր Աշխարհակարգի ձևավորման գործընթացներին, հստակ մատնանշել Նոր Աշխարհակարգի քարտեզագրման պրոցեսում և արդյունքում մեր ակնկալվող հավակնությունները, և ըստ այդմ՝ ողջ ընթացքի համար բացահայտել մեր բնական դաշնակիցներին: Վերջիններին հետ շահերի համադրման նպատակային աշխատանքն ապահովելու է Ազգային Պետության անվտանգության հիմքերը:

Բ) ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Ժամանակակից աշխարհը գտնվում է քաղաքակրթական խորը, համակարգային և համընդհանուր ճգնաժամի մեջ, որը պայմանավորված է քաղաքակրթությունների կյանքի հերթական փուլի (ցիկլի) իրացման ավարտուն ընթացքով: Առկա ճգնաժամն իր բնույթով աննախադեպ է համամարդկային պատմության մեջ և արտահայտվում է երկակի շերտերով:

Մի կողմից, արդեն սպառվել, մաշվել են աշխարհի ժամանակակից իրողությունները պայմանավորող քաղաքական, տնտեսական, մշակութային և երկրաբնապահպանական տիրապետող հայեցակարգերը, որոնք չեն կարող ապահովել մարդկության հետագա կենսազարգացումը:

Մյուս կողմից, տեխնոլոգիական նոր գործիքները (թվայնացում, արհեստական բանականություն և այլն) նոր, անսահման հնարավորություններ են բացում մարդկության կենսազարգացման համար: Սակայն, ինչպես ողջ պատմության ընթացքում, այնպես էլ հիմա, ցանկացած գործիք կարող է օգտագործվել և՛ բարի, և՛ ոչ բարի նպատակներով, ունենալ՝ և՛ դրական, և՛ բացասական ազդեցություն:

Հետևաբար, ներկա ճգնաժամի ողջ բնույթը և հանգուցալուծումը գտնվում է մարդկության հետագա զարգացման էության մեջ, բուն «զարգացում» հասկացության մեկնաբանման, նախագծման, ծրագրավորման և ճարտարապետման մեջ, այսինքն՝ ապագան այսօր իրականություն դարձնելու մեջ:

Այսօր արդեն իսկ հստակ են մարդկության հետագա ճակատագրի երկու սցենար.

Առաջինը՝ մարդկության տոտալ ստրկացման հեռանկարն է, որը իրականություն է դառնալու (արդեն դառնում է) Չորրորդ արդյունաբերական հեղափոխության ընձեռած հնարավորությունների հետևանքով՝ թվային տեխնոլոգիաների, արհեստական

բանականության ակտիվ ու սանձարձակ կիրառման միջոցով: Ի տարբերություն արդյունաբերական նախորդ հեղափոխությունների, այս անգամ ազդեցության բուն օբյեկտը մարդն է: Նպատակը՝ մարդկային գիտակցության վերակոդավորումը և նրա վարքագծի տոտալ մոդելավորումը, ուղղորդումն ու վերահսկումն է, որի արդյունքում էութենական մարդու փոխարեն գերնյութապաշտ, սպառող, սոցիալական բոլոր պատասխանատվություններից ու կապերից կտրված, խիստ պրիմիտիվ մարդկային տեսակի՝ բիոռոբոտի ստացումն է: Այս սցենարը, որը ներկայացվում է որպես համաշխարհայնացման (գլոբալիզացիայի) միտում, կյանքի է կոչվում տիրապետող հայեցակարգերի «Մեծ գրոյացման» արդյունքում, «Էնքլուզիվ կապիտալիզմի» հռչակագրային դրույթներին համապատասխան: Վերջինիներս սուսկ գեղեցիկ փաթեթավորմամբ գաղափարական հիմնավորում են ապահովում մարդկության «զարգացման» առաջնահերթություններին: Արդեն (70-ականների կեսերին նեոլիբերալ հեղաշրջման հետևանքով) մահացած լիբերալիզմն իր ձևավորումն ու գոյությունն ապահովում էր «Աստված չկա» պարադիգմի վրա և իր ավարտին փորձում է իրականություն դարձնել «Աստված չկա», հետևաբար «Աստծո արարված մարդը չկա» պարադիգմային շղթան: Բացի դրանից, բնապահպանական, առողջապահական, ժողովրդագրական ու մարդու իրավունքների սեփական օրակարգերի պարտադրմամբ կյանքի են կոչվում վերալետական կառավարման գլոբալ մեխանիզմները, որոնք արդեն իսկ անհնար են դարձնում սուվերեն պետությունների գոյությունը: Արդյունքում, մարդկային համակեցության կազմակերպման բարձրագույն ձևերն այնս չեն կարող խոչընդոտել ժամանակակից ստրկացման գործընթացին, որն, ինչպես նշվեց, առավել իրատեսական է դառնում թվային տեխնոլոգիաներով մարդկանց վարքագծի կառավարման՝ արժեհամակարգի ու կենցաղվարության համահարթեցման, պիրիմիտիվացման, գերնյութականացման ու գոեհիկացման միջոցով:

Հաջորդ սցենարը վերաբերում է մարդկության սոցիալ-բնական կենսազարգացմանը, որտեղ առաջնահերթությունը տրվում է մարդկային քաղաքակրթական բազմազանության պահպանմանը և արարմանը: Թվային տեխնոլոգիաները կիրառելի են ոչ թե անհատների մեկուսացման, վարքագծի վերահսկման, այլ մարդկային ստեղծագործ մտքի արարման նոր հեռանկարներ բացելու ուղղությամբ: Այլ խոսքերով ասած, երբ տեխնոլոգիաները ավանդականորեն դիտարկվում են գործիք արտաքին միջավայրը բարելավելու և քաղաքակրթելու նպատակով: Արհեստական բանականությունը նպաստելու է հավաք բանականության, հավաք գիտակցության ձևավորմանը՝ բարոյական-արժեքային, արարչական-արդար հիմքի վրա: Այս սցենարի հիմնական նպատակը՝ արարող մարդկային տեսակի, նրա արժեքային համակեցությունների լիարժեք կենսազարգացումն է, որը հնարավոր է մարդկային քաղաքակրթական բազմազանության և ժառանգականության վերարտադրման շնորհիվ, որտեղ արհեստական բանականությունը հանդես է գալիս, որպես այս ամենի կայացմանը նպաստող տեխնոլոգիական գործիք, միջոց:

Այս երկու սցենարի բախումը, որն արտահայտվելու է (արտահայտվում է) real politic գործողություններով, փոխելու է աշխարհաքաղաքական ժամանակակից ստատուս-քվոն և

Նոր Աշխարհակարգի հաստատմամբ վերափոխելու է աշխարհի ժամանակակից քաղաքական քարտեզը:

Հայաստանը տևական ժամանակ արդեն իսկ հայտնվել էր առաջին սցենարի թիրախում: Այն վերածվել էր տեխնոլոգիական սանձարձակ փորձարկումների հենադաշտի, որի պարտադիր նպատակակետն էր 2020 թվականի նոյեմբերի 9-ի կապիտուլյացիան: Վերջինիս միջոցով քանդվեց ազգային դիմադրողականության վերջին պատնեշը և Հայաստանը հայտնվեց ապարժեքային հորձանուտում, իսկ 2021-ի հունիսի 20-ով վերջնականապես փաստվեց ապարժեքային քառսի հաստատումը: Բացի դրանից, բանակի նպատակային կազմաքանդման շարունակականությամբ փաստացի վերջ է դրվում Երրորդ հանրապետությանը: Պետականության միայն դե յուրե գոյությունը, սուբյեկտայնության բացարձակ բացակայությունը Հայաստանն աշխարհաքաղաքական կործանարար գործընթացների համար սոսկ օբյեկտ է դարձել և մեզ զրկել է բնական դաշնակիցների հետ փոխշահավետ հարաբերվելու ու գործելու բոլոր տեսակի հնարավորություններից: Սակայն, ստեղծված իրավիճակը միաժամանակ լայն հնարավորություններ է բացում, քանի որ հստակ տեսանելի են դարձել բոլոր խնդիրները՝ պարտադրելով գտնել լուծումներ և հաղթահարել ճգնաժամը: Իսկ ապարժեքային ճգնաժամի հաղթահարումը ոչ միայն հայկական իրականության համար է անհրաժեշտ, այլև համամարդկային քաղաքակրթության հարատևության համար:

Հետևաբար, Հայկական Ազգային Պետության ձևավորման պահանջով, միաժամանակ քաղաքարթական հայտ է ներկայացվում ստանձնելու պատասխանատու դեր՝ դիմակայելու և հաղթահարելու քաղաքակրթական համակարգային ճգնաժամը:

Այսպիսով, ելնելով հայ տեսակի քաղաքակրթական-արարչական առաքելությունից՝ Հայկական Ազգային պետությունն իր ողջ ռեսուրսներով երաշխավոր է կանգնելու.

- Համամարդկային քաղաքակրթության բազմազանության պահպանմանը,
- Մարդկության սոցիալ-բնական կենսազարգացմանը,
- Արարող, հոգևոր-բարոյական-արժեքային մարդկային տեսակի լիարժեք կենսագործունեությանը,
- Ապագա Աշխարհակարգի հաստատման հիմքում արարչական սկզբունքի՝ և արդարության ներդրմանը,
- Քաղաքակրթական հաղորդակցի իր գործառույթի իրացմանը,
- Հյուսիս-Հարավ-Արևելք-Արմուտք քաղաքակրթական կողերի ներդաշնակմանը, դրանց աղեղների համադրմամբ՝ քաղաքակրթական բնական Խաչի հավաքմանը,
- Դաշնակիցների հետ լիարժեք կենսագործունեությանը՝ հանուն համընդհանուր գերնպատակների կայացման:

Գ) ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ապագա Ազգային Պետության անվտանգային համակարգը բացառապես կառուցված է լինելու պետականաշինության սոցիալ-բնական, կենսասոցիալական,

ազգակեցական, տարածաշրջանային համակեցական և համամարդկային ամբողջակեցական հայեցակարգային ու համագործակցային կենսաքաղաքականության և կենսագործունեության անհրաժեշտությունից: Դա պարտադրում է նախ հստակեցնել սեփական տեսակի ազգակեցական զարգացման առաջնահերթությունները¹ և դրանք՝ գալիք աշխարհակարգի ձևավորման գործընթացում, ներդաշնակել բնական դաշնակիցների շահերի հետ: Ըստ այդմ, ապագա Աշխարհակարգում Հայկական Պետության սուբյեկտայնությունը պետք է բխի հայկական քաղաքակրթության առաքելության հավակնություններից, որոնք իրենց էությամբ և բնույթով ամբողջապես համադրելի կլինեն աշխարհաքաղաքական այն գլխավոր ակտորների շահերին, որոնք միտված կլինեն Արդար Աշխարհակարգ կառուցելու տրամաբանությանը:

Հետևաբար, Հայկական Ազգային հզոր պետության գոյությամբ պետք է սահմանվի նրա հստակ պետքականությունը, դերակատարությունը և առաքելությունը: Ապագա Աշխարհակարգի ձևավորման բոլոր հարթություններում, այսինքն՝ երկրագնդի աշխարհաքաղաքական կառուցվածքի բոլոր՝ մակրո, մեզո և միկրո մակարդակներում:

Ըստ այդմ, Հայկական Ազգային պետության անվտանգության հիմքերը կառուցվելու են եռաչափ տրամաբանությամբ՝

- **Միկրո մակարդակ – ԱՄՐՈՑ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ - CASTLE-STATE - ЗАМОК-ГОСУДАРСТВО**

Ուժեղ պետականության նոր մոդելի ներդրում: Այն քաղաքակրթական հիմքով ազգային պետության նոր տիպն է, որը որպես համակեցության մակարդակ լիարժեք ապահովելու է սեփական տեսակի կենսագործունեությունը և դիմակայելու է արժեքային համահարթեցման, տոտալ ստրկացման մարտահրավերներին: Այսինքն, Նոր Աշխարհակարգի ձևավորումն ապահովող գործընթացներում Ամրոց-Պետությունները դառնալու են և՛ դիմակայության քաղաքակրթական դարպասներ, և՛ քաղաքակրթական ժառանգականության փոխանցման և էներգիայի կուտակման քաղաքակրթական կամուրջներ: ԱՄՐՈՑ-ՊԵՏՈՒԹՅԱՆ մոդելը կառուցվելու է ԲԵՐԴ-ՀԱՄԱՅՆՔ սկզբունքի վրա, որտեղ համայնքային մակարդակով ինքնակազմակերպումն ու ինքնակառավարումը՝ տնտեսական, քաղաքական, մշակութային, ռազմական և տեխնոլոգիական ասպեկտներով ապահովվելու է ինքնաբավ համայնք – ինքնաբավ պետություն, արարող համայնք – արարող պետություն շղթայի ամբողջականությունը:

Հայաստանի կողմից նմանատիպ պետության ձևավորման հայտը բխում է մեր տեսակի կենսական անհրաժեշտությունից և միաժամանակ հիմք կարող է դառնալ ապագա Աշխարհակարգի գլխավոր սուբյեկտների ձևավորման համար: Այսինքն, ներդրվում է նոր տիպի ազգային սուվերեն պետությունների մոդել, որտեղ բացառվում է հասարակական կյանքի կազմակերպման սպառված

¹ Ներկայացված են Աշխարհաժողովի կողից արժեքային, քաղաքական, տնտեսական և անվտանգային հիմնադրույթների հռչակագրերում

շաբլոնների (սինգապուրյան, շվեյցարական, իսրայելական, թե այլ) պարտադրանքը: Այդ հանգամանքն ինքնին ենթադրում է քաղաքակրթական հստակ պատասխանատվության ստանձնում և բնական դաշնակիցների հետ լիարժեք համագործակցություն:

Հետևաբար, քաղաքակրթական հիմքով Հայկական Ազգային պետության հայտը հստակ ուղերձ է բոլոր դաշնակիցներին:

- **Մեզո մակարդակ - Միջին Արևելք - Ընդհանուր տուն, Middle East - Common Home, Ближний Восток - Общий дом:**

Մեզո մակարդակում, անվտանգության հայեցակարգը պետք է կառուցվի տարածաշրջանների ավտոխտոն ժողովուրդների սոցիալ-բնական, համակեցական համագործակցությունն ու կենսագործունեությունն ապահովող անվտանգային առաջնահերթությամբ: Այս ասպեկտում առաջնահերթ նշանակություն է ստանում տարածաշրջանի եկվոր (եությամբ դեռ քոչվոր) էթնիկ խմբերի էքսպանսիոն հավակնությունների չեզոքացումը: Հետևաբար, ապագա Աշխարհակարգի հիմքը պետք է կազմեն քաղաքակրթական անվտանգության տարածաշրջանային գոտիները, որոնք և՛ պետք է դիմակայեն քանդող (ավերող, սպառող, կլանող) քաղաքակրթությունների (հակաքաղաքակրթությունների) մարտահրավերներին, և՛ պետք է ապահովեն քաղաքակրթական ժառանգականության ու էներգիայի փոխանակում: Ըստ այդմ, տարածաշրջանային անվտանգության քաղաքակրթական արեալներն ապագա Աշխարհակարգում կատարելու են քաղաքակրթական հաղորդակցիչի դեր և ապահովելու են համամարդկային քաղաքակրթական բազմազանության լիարժեք ու ներդաշնակ կենսագարգացումն ամբողջ Երկրագնդով:

Երկրագնդի աշխարհաքաղաքական ապագա կառուցվածքում, նմանատիպ՝ քաղաքակրթական (տարածաշրջանային) անվտանգության արեալի կարգավիճակի կարող է և պետք է հավակնի Միջին Արևելքը, որը հանդես է գալու որպես ավտոխտոն ժողովուրդների ընդհանուր տուն: Ըստ այդմ, ձևավորվելու է անվտանգային այն միջավայրը, որը հնարավորություն է տալու որպեսզի բնիկ ժողովուրդները լիարժեք կենսագործեն, իսկ դա իր հերթին հնարավորություն կտա քաղաքակրթական հաղորդակցիչի դեր կատարել ապագա Աշխարհակարգի հիմնական բևեռների՝ պայմանական Արևելքի (Չինաստան, Հնդկաստան), Արևմուտքի (Արևմտյան քաղաքակրթության կողմ պահող միջին խավ), Հյուսիսի (Ռուսաստան) և Հարավի (Աֆրիկայի ավտոխտոն ժողովուրդներ) միջև:

Հետևաբար, «Միջին Արևելք - Ընդհանուր տուն» անվտանգային հայեցակարգը, որպես աշխարհաքաղաքական ռեալ ծրագիր, լիարժեք ներդաշնակում է և՛ տարածաշրջանի ավտոխտոն ժողովուրդների, և՛ աշխարհաքաղաքական գլխավոր դերակատարների շահերը:

Պատմական պատասխանատվությունից ելնելով՝ «Միջին Արևելք - Ընդհանուր տուն» անվտանգային հայեցակարգն իրականություն դարձնելու պարտականությունը կրելու են Հայկական և Իրանական պետությունները, որոնք կարող են և պետք է ներդաշնակեն տարածաշրջանի ավտոխտոն ժողովուրդների սոցիալ-բնական, համընդհանուր համակեցական կենսագործունեությունն ու համագործակցությունը, և՛ պետք է դիմակայեն թյուրքական քանդող-ավերող գործոնին: Ավելին, Հայ-Իրանական՝ քրիստոնեական-մահմեդական աշխարհների առանցքի շուրջ, Միջին Արևելքում կարող են համադրվել Հյուսիս-Հարավի-Արևելքի-Արևմուտքի քաղաքակրթական վեկտորները:

Ըստ այդմ, աշխարհաքաղաքական գլխավոր ակտորների կողմից ապագա Աշխարհակարգի կայացման համար անհրաժեշտ հաղորդակցման ուղիների (տրանսպորտային, տեղեկատվական և այլն) նախագծման, ծրագրավորման և ճարտարապետման գործընթացներում Միջին Արևելքի քարտեզագրումը բացառապես պետք է բխի վերոնշյալ իրողություններից, այն է՝ ավտոխտոն ժողովուրդների կենսագործունեության ու համագործակցության լիարժեք ապահովում և թյուրքական էքսպանսիայի բացառում:

Այս տեսանկյունից նույնպես, Հայաստանի աշխարհագրական տարածքը լիովին բավարարում է Հյուսիս-Հարավ, Արևելք-Արևմուտք տարանցիկ ուղիների հանգույցի կարգավիճակին:

Այսպիսով, տարածաշրջանային մակարդակով նույնպես, Հայկական Ազգային պետության գոյությունը և հզորությունը դառնում է անփոխարինելի երաշխավոր ապագա Աշխարհակարգի հաստատման գործընթացում: Իսկ դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ Հայկական պետությունը գիտակցում է սեփական պատասխանատվությունը, լիարժեք իրականացնում է սեփական պարտականությունը և վաստակում է իրավունք՝ ապագա Աշխարհակարգում:

- **Մակրոմակարդակ – Քաղաքակրթական Աշխարհակարգ**

Մակրոմակարդակում միջազգային անվտանգության համակարգը պետք է կառուցվի բոլորովին նոր հիմքի վրա, որտեղ առանցքայինը մարդկային էությունականության, ըստ այդմ՝ քաղաքակրթական բազմազանության կենսազարգացման հնարավորությունների լիարժեք ապահովումն է:

Հետևաբար, ապագա Աշխարհակարգն իր բնույթով պետք է լինի քաղաքակրթական, որի անհրաժեշտությունը թելադրված է մարդկության (համամարդկային քաղաքակրթության) հարատևության ապահովման պարտադրանքով:

Քաղաքակրթական Աշխարհակարգի հաստատումը ենթադրում է միաժամանակյա գործընթացներ երկու ճակատով՝ հարթությամբ.

Նախ անհրաժեշտ է արմատապես փոխել ներկա՝ ճգնաժամ ապրող Աշխարհակարգի համակարգաստեղծ այն բաղադրիչները, որոնց

«ախտահարվածությունը», սպառվածությունը բուն ճգնաժամի պատճառ են հանդիսանում: Այսպես, Երկրորդ աշխարհամարտից հետո հաստատված Աշխարհակարգն՝ իր միջազգային հարաբերությունների կարգավորման գործիքակազմով և սոցիալ-քաղաքական կայունության ստատուս-քվոյով, սոցիալիստական ճամբարի քանդամբ վաղուց փլուզվել էր և վերջին շրջանում սոսկ ապահովում էր իներցիոն ընթացք, որը Երկրագնդի աշխարհաքաղաքական կառուցվածքում արտահայտվում էր պայմանական Արևմուտքի դոմինանտությամբ: Վերջինիս գերակայությունը սպասարկող և ողջ մոլորակին պարտադրվող քաղաքական, տնտեսական, գաղափարական, բնապահպանական օրակարգերը հրամացվում էին որպես մարդկության «զարգացման առաջնահերթություններ»: Արդյունքում, հաստատվել է նեոգաղութային այնպիսի համակարգ, որտեղ ուժային կենտրոն/ների շահագործման ու պարտադրանքի միջոցով տեղի է ունեցել հասարակական արդյունքի և հարստության գերբևեռացում, անարդարության ու անհավասարության գերնյութականացում:

Սակայն, վերոնշյալ նեոլիբերալ հայեցակարգերը մաշվել են, սպառվել են և ունակ չեն այլևս սպասարկել ժամանակակից հասարակական կյանքի խաղաղ ու լիարժեք կազմակերպումը:

Այստեղ էլ բացահայտվում է Քաղաքակրթական Աշխարհակարգի ձևավորման հաջորդ հարթությունը, որտեղ պետք է դիմակայել, չեզոքացնել այն մարտահրավերներն ու սպառնալիքները, որոնք միտված են «զրոյացնել» և «վերագործարկել» ճգնաժամաստեղծ բաղադրիչները՝ դրանք դարձնելով մարդկության թվային ստրկացումը լեգիտիմացնող աշխարհակարգի կառուցման «նոր» գործիքներ:

Այս տեսանկյունից, ապագա Քաղաքակրթական Աշխարհակարգի կառուցման համար առանցքային է նրա կառուցվածքի հստակ նախագծումը և ճարտարապետումը, որը ենթադրում է **Երկրագնդի աշխարհաքաղաքական կառուցվածքի նոր մոդելի ներդրում** /գծապատկեր 1/.

Մինչ այժմ, միջազգային անվտանգության ստատուս-քվոն ապահովվում էր ուժային կենտրոնների միջև ազդեցության գոտիների բաշխմամբ: Այսինքն, նեոգաղութային հաստատված համակարգը բնորոշվում էր նեոկայսրությունների միջև ձևավորված փոխհարաբերություններով: Սակայն, համաշխարհայնացման արդի միտումները, թվային հեղափոխության շնորհիվ տեղեկատվության և էներգիայի վերահսկման և ուղղորդման հնարավորությունները պայքարի թիրախ են դարձրել ոչ թե Երկրագնդի առանձին շրջաններ, մարդկության առանձին համակեցություններ, այլ ողջ մոլորակն ու մարդկությունը: Այսինքն, պայքարը գնում է համաշխարհային տոտալ տիրապետման, ողջ մարդկության տոտալ վերահսկման համար: Հետևաբար, կայսրապաշտական մոտեցումներն ի սկզբանե դատապարտված են, քանի որ տարածքների ու համակեցությունների ֆորմալ տիրապետումը չի երաշխավորում դրանց վերահսկում: Ընդհակառակը, քանի որ

պայքարը գնում է մարդկային սոցիալ-բնական էության և նրանց գիտակցության վերակողման՝ բիոռոբոտացման (ստրկացման) միջև, ապա Քաղաքակրթական Աշխարհակարգի հաստատման գլխավոր նախապայմանը՝ համակեցությունների սոցիալ-բնական իրավունքի ապահովումն է։ Դա ենթադրում է քաղաքակրթական հիմքով սուվերեն, ուժեղ պետությունների գոյություն, որոնք ձևավորելու են Ապագա Աշխարհակարգի առաջնային շերտը՝ նրա միկրոմակարդը։

Ազգային պետությունների բնական դաշնակցությամբ ձևավորվելու են տարածաշրջանային քաղաքակրթական արեալները, որոնք և՛ կառուցվելու են Երկրագնդի աշխարհաքաղաքական կառուցվածքի մեզոմակարդակը, և՛ ապահովվելու են քաղաքակրթական հաղորդակցիչի գործառույթ՝ ապահովելով քաղաքակրթական բազմազանության լիարժեք կենսազարգացումը։

Քաղաքակրթական տարածաշրջանային գոտիների բնական դաշնակցության հիմքով ձևավորվելու է Ապագա Աշխարհակարգի մակրոմակարդը, ընդհանրացնելով ողջ համակարգի ամբողջականությունը։ Այս շերտի ձևավորումը հնարավոր է պատասխանատու ակտորների դերակատարմամբ, որոնք, գիտակցելով սեփական պատասխանատվությունը, կկարողանան իրացնել սեփական պարտավորությունները և ըստ այդմ ձեռք կբերեն մարդկային քաղաքակրթության կենսազարգացման երաշխավորի՝ Ապագա Աշխարհակարգում ուժային կենտրոնի իրավունք։ Այսինքն, վերջիններս և՛ պետք է նպաստեն, երաշխավորեն ազգային պետությունների սուվերեն ու ինքնաբավ զարգացումը, և՛ միաժամանակ ապահովեն քաղաքակրթական արեալների միջև հաղորդակցման լիարժեք հնարավորությունները։

Այսպիսով, ապագա Աշխարհակարգի ձևավորման գործընթացներում բաժանարար գծերն անցնելու են Ազգային պետությունների սահմաններով, այլ ոչ թե՛ նեոկայսերական ազդեցության գոտիներով։ Այսինքն, այդ սահմանները միաժամանակ դառնում են քաղաքակրթական ընդհանուր սահմաններ, որոնք հստակ բաժանարար գծեր են մարդկության կենսազարգացման քաղաքակրթական և հակաքաղաքակրթական միտումների, գործընթացների միջև։

Ամփոփելով աշխարհաքաղաքական կառուցվածքի ճարտարապետումը, այն կարող ենք ներկայացնել պատկերավոր ձևակերպմամբ։ Հին Աշխարհակարգի փլուզման և նորի ձևավորման գործընթացն արտահայտվում է ապարժեքային, անմարդկային քասով, ջրհեղեղով։ Փրկության միակ պայմանը Տապանի կառուցումն է, որի շնորհիվ մարդկությունը շանս է ստանալու դիմակայել վաղուց սկսված, հիմա իրականացվող և ապագայում սաստկացող ապարժեքային հորձանուտին։

պարագայում: Սակայն, Աշխարհաժողովի կողմից Ազգային պետության ձևավորման հայտը, միաժամանակ պարտադրում է նրա անվտանգային հիմքերի ստեղծմանն ուղղված գործնական քայլեր, որոնցից առաջնահերթ ենք համարում.

- Ազգային պետության քաղաքական, տնտեսական, մշակութային և անվտանգային հիմնադրույթների ներդաշնակման միջոցով՝ Բերդ-Համայնք – Ամրոց-Պետություն հայեցակարգի ամբողջական մշակում և շրջանառում:
- Աշխարհաժողովային հիմնադրույթների հիման վրա ազգային անվտանգության գործնական ռազմավարության մշակում և շրջանառում: Դա պարտադրում է համապատասխան մասնագետների համատեղ աշխատանք, որոնց փոխգարծակցության արդյունքի հիման վրա էլ ձևավորվելու է ապագա Ազգային պետության անվտանգության խորքային ինստիտուտը:
- Միջին Արևելք քաղաքակրթական անվտանգության արելաի ձևավորման համար համապատասխան հուշագրի (հավելված 1) շրջանառում՝ տարածաշրջանի ավտոխտոն ժողովուրդների հետ համապատասխան հաղորդակցման միջոցով:
- Հյուսիս-Հարավ-Արևելք-Արմուտք բևեռներից սեփական քաղաքակրթական կողերը փոխանցելու ունակ ուժերի մասնակցությամբ՝ քաղաքակրթական ֆորումի կազմակերպում: Նպատակը՝ քաղաքակրթական մատրիցաների համադրման շնորհիվ՝ Քաղաքակրթական Աշխարհակարգի հայտի ներկայացումն է:

**Միջին Արևելքի ավտոխտոն ժողովուրդների Ընդհանուր տուն կառուցելու
հուշագիր**

Մենք՝ Միջին Արևելք մեծ տարածաշրջանի ավտոխտոն ժողովուրդներս, որոնց նախնիները անհիշելի ժամանակներից բնակվելով հին աշխարհի սրտում կերտել են համաշխարհային (հետջրհեղեղյան) առաջին քաղաքակրթությունը, ձևավորել՝ էթնիկական և կրոնական տարբեր խմբերի, կազմավորումների խաղաղ գոյակցության, խնդիրների և տարաձայնությունների կարգավորման հիմնարար սկզբունքներ, տարածաշրջանի և ողջ աշխարհի համար այս բախտորոշ պահին հայտնում ենք վճռական կամք՝ վերջ դնելու ագրեսիվ վարչակարգերի կողմից տարածաշրջանային լարվածության հետագա սրացումը և համաշխարհային քաղաքակրթությունը կործանման տանելու սպառնալիքը՝ ելնելով քաղաքակրթության և մարդկության հոգևոր բարձր ու վեհ ժառանգության հանդեպ մեր պատմական պատասխանատվությունից: Այն պահից ի վեր, երբ մեր տարածաշրջան ներխուժեցին չքաղաքակրթված ցեղախմբեր՝ մեր արևելյան սահմանների շատ հեռու գտնվող տափաստանային տարածքներից, մեր տարածաշրջանի զարգացումը դուրս եկավ իր բնականոն ուղեծրից: Ավտոխտոն ժողովուրդների բնաջնջման և ստրկության պարտադրման, նրանց հոգևոր ու մշակութային ժառանգության ոչնչացման և խեղաթյուրման հետևանքով արդեն մեկ հազարամյակ Միջին Արևելքը ոչ միայն չի կատարում քաղաքակրթական կրակը պահպանողի իր սուրբ պարտականությունն, այլև ինքն է վերածվել սառեցված քաղաքակրթության արյունահոսող տարածքի: Անհանդուրժելի է տեսնել, թե ինչպես են խեղաթյուրվել մեր տարածաշրջանում ծնունդ առած տիեզերքի, բնության հետ ներդաշնակ գոյության, աստվածային և արարչական օրենքները երկիր մոլորակի այլ հատվածներում, որոնցով փորձում են արդարացնել զանգվածային ոչնչացման սպառազինությունը, նյութապաշտության արմատավորումը, վաշխառուական մոդելի պարտադրումը, զանգվածների ստրկացումը վարկատու ինստիտուտների կողմից, նյութական հարստությունների, իշխանության հիմնական լծակների կենտրոնացումը փոքրաթիվ խմբերի ձեռքում, սոցիալական անհավասարության աղետալի մասշտաբները, գիտության, այսպես կոչված, «մեխանիկական և ռացիոնալիստական» դեֆորմացիան, նրա տարանջատումն անկառավարելի ճյուղերի, որոնք չեն խորշում բարոյական և էթնիկական նորմերի հետ անհամատեղելի մշակումներից, ծայրահեղ վտանգավոր փորձարկումներից, կրթական զանգվածային համակարգերի ներդրումը, որոնք շտամպում են մակերսային գիտելիքներով, հանրային ցածր պատասխանատվության քաղաքացիներ, եսակենտրոնության, անհազ սպառողականության կատաղի քարոզ, անհատի տարանջատում համայնքից, հասարակական առաջնային օղակների, այդ թվում ընտանիքի կազմաքանդում և բարոյական ավանդական նորմերի ոտնահարում, բնության կործանարար շահագործում և միջավայրի անխնա աղտոտում:

Պատմությունը ցույց տվեց, որ մեր տարածաշրջանի թափանցած խորթ տարրերը այդպես էլ չընդունեցին անհիշելի ժամանակներից այստեղ հաստատված օրենքներն ու ավանդույթները, չհարգեցին մեր ավանդական պաշտամունքները և հավատքը: Օտարածին պետական համակարգերը իրենց ծավալապաշտական անթաքույց ծրագրերով անդադար ապակայունացնում են մեր տարածաշրջանը: Եթե մինչև քսաներորդ դար թուրք առաջնորդներն էին ապակայունացման մեղավորները, ապա Իսրայելի ստեղծման օրից այդ քայքայիչ արշավին միացան վերոհիշյալ պետության ղեկավարները: Երկու այդ գոտիներում անդադար գեներացվում են մեր տարածաշրջանի համար լուրջ սպառնալիքներ և արդեն երկար ժամանակ հեռահար թիրախավորումներով: Անհնար է հաշվել և գնահատել բարոյական ահռելի այն վնասները, որոնք հասցվեցին իսլամին վերջին այս մի քանի տարիներին այսպես կոչված «Իսլամական Պետության» արհեստածին նախագծով, որը իրականում իսլամի թշնամիների դավադրություն էր աներևակայելի սանձազերծ քաղտեխնոլոգիաներով: Մեր տարածաշրջանի համար օտար ու խորթ ուժերը համառորեն ջանում էին ձևավորել «ջիհադիստական» ինտերնացիոնալ՝ աշխարհաքաղաքական իրենց հեռու գնացող նպատակները իրագործելու նպատակով: Վերջին մեկ դարում մեկ անգամ չէ, որ կործանարար ինտերնացիոնալները գործի են դրվում կազմաքանդելու հազարամյակների քննությունն անցած համակարգեր և մարդկության ավանդական հիմնասյուներ: Հարյուր տարի առաջ աշխարհը ցնցվում էր կոմունիստական ինտերնացիոնալի ցանցային դավադրություններով: Արդեն մի քանի տասնամյակ է, ինչ չեն դադարում քայքայիչ գործողություններ նեոլիբերալիստական ինտերնացիոնալի անունից իրենց գունավոր հեղափոխություններով, խելահեղ կոնվենցիաների պարտադրմամբ: Համընդհանուր քառսի միջոցով աշխարհը մղվում է համահարթեցման «դիֆ ստեյթ» կոչվող ուժերի կողմից, որոնք, սնօրինելով ահռելի նյութական միջոցներ և վարչական լծակներ, ձգտում են աշխարհի ժողովուրդներին պարտադրել էլ ավելի կոշտ կառավարման մոդել: Բոլոր ժամանակներում ինտերնացիոնալների անունները տարբեր են, սակայն նույն են մնում նրանց նպատակները և մեթոդները: Երկու հազար քսան թվականի սեպտեմբերի քսան յոթից մեր տարածաշրջանը ցնցվեց օտարածին, էլ ավելի վտանգավոր ծրագրի գործադրմամբ: Արցախում ինքնորոշման իրավունքի համար պայքարող ավտոխոսն ժողովրդի վերջին հատվածը ենթարկվեց թուրք-ադրբեջանական համատեղ ագրեսիայի: Նախահարձակ ուժերն իրենց ցեղասպան պատերազմը վարում են «ջիհադիստական» ինտերնացիոնալի վարձկաններով, իսրայելական զենքերով և Պակիստանի քաղաքական, նյութական, ռազմական աջակցությամբ: Ակնհայտ է, որ միջազգային այս նախահարձակ դաշինքի նպատակը չի սահմանափակվում մեր տարածաշրջանի ամենահնագույն ժողովուրդներից մեկի՝ հայերի լիակատար ցեղասպանությամբ: Գերնպատակն է Հայաստանի նվաճմամբ, ցամաքային ուղի հարթել դեպի արևելք՝ ապահովելու համաթուրանական թարմ արյան ներարկում մեր տարածաշրջան, ինչն թույլ կտա ավարտել այն, ինչ սկսվել է ուղիղ հազար տարի առաջ: Հյուսիսային Իրանի, Հայկական բարձրավանդակի և Անատոլիայի բնիկ ժողովուրդների ճակատագրի կրկնությունն ակնհայտորեն սպառնում է նաև մեր տարածաշրջանի կենտրոնական և հարավային գոտիների ժողովուրդներին: Այս օրհասական պահին մենք

պարտավոր ենք դիմել համընդհանուր մոբիլիզացիայի և միջազգային համախմբման՝ դիմակայելու օրեցօր ահագնացող սպառնալիքներին, որոնք կարող են վերջնականապես ավերակների վերածել մեր երբեմնի ծաղկուն ու քաղաքակրթական լույս տարածող տարածաշրջանը: Սպառնալիքները կարող է չեզոքացվել երկու կարևոր խնդիրների իրագործմամբ.

Առաջին՝ կապիտուլյացիայի ենթարկել սպառնալիք գեներացնող երկրների ծավալապաշտական վարչակազմերին՝ ազատելով նրանց ժողովուրդներին ծավալապաշտության բույթ գործիք լինելու պարտադրանքից:

Երկրորդ՝ հուսալիորեն պաշտպանել տարածաշրջանի սահմանները օտար ուժերի ներթափանցումից և հարձակումներից: Միայն այս ճանապարհով կվերահաստատվի կայուն խաղաղությունը մեր տարածաշրջանում, կրկին մեր ժողովուրդները կընթանան աստվածային ու տիեզերական օրենքներին համահունչ խաղաղ արարման ու հոգևոր զարգացման ուղիով: Բարոյական ու հոգևոր բարձր չափանիշներով և համապարփակ պատասխանատվության նոր քաղաքակրթության կերտումն ու նրա ամրապնդումը մեր տարածաշրջանի ավտոխտոն ժողովուրդների սրբազան առաքելությունն է: Մենք պատրաստ կլինենք աջակցություն ցուցաբերել բոլոր այն ժողովուրդներին, որոնք կձգտեն վերականգնել տիեզերական արարչագործական օրենքները, հարյուրամյակների և հազարամյակների քննություն անցած արժեքներն իրենց տիրույթներում հաստատելով արդար համընդհանուր ներդաշնակ աշխարհակարգ: